ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 12.12.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2019/219

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ ՀՀ ազգային անվտանգության ծառայություն
Մասնակից՝ «Ուրբան Յունիթ» ՍՊԸ

Մասնակցությամբ՝ «Ուրբան Յունիթ» ՍՊԸ-ի փոխտնօրեն Ա. Ֆելբուս Ասատուրյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԳՀԱՇՁԲ-20/2» ծածկագրով գնանշման հարցում, շենքերի, շինությունների հիմնանորոգման աշխատանքների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 21.11.2019թ.-ի թիվ 26/26-1/19209-2019 գրությամբ «Ուրբան Յունիթ» ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու

իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի նախապատմությունը.

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ ազգային անվտանգության ծառայության 19.11.2019թ. թիվ 20/1018 գրության հիման վրա, 21.11.2019թ. «Ուրբան Յունիթ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձին գործը մակագրվել է 21.11.2019թ.-ին և նույն օրը կայացված որոշմամբ գործը ընդունվել է վարույթ և 27.11.2019թ.-ին նշանակվել է նիստ:

Գործի քննությունն ավարտվել է 27.11.2019թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 12.12.2019թ.-ին:

2. ՀՀ ազգային անվտանգության ծառայությունան ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.

ՀՀ ազգային անվտանգության ծառայությունունը 25.11.2019թ. թիվ 04/31.2/27341-19 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնել է, որ «ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԳՀԱՇՁԲ-20/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի 10-րդ և 11-րդ չափաբաժինների մասով ընտրված մասնակից ճանաչված «Ուրբան Յունիթ» ՍՊԸ-ն հրաժարվել է սահմանված ժամկտում պայմանագիր կնքելուց:

Միևնույն ժամանակ, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետը, ներկայացրել են թիվ «ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԳՀԱՇՁԲ-20/2» ծածկագրով գնման ընթացակարգի մասնակից «Ուրբան Յունիթ» ՍՊԸ-ի վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթերը, որոնք կցվել են ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված գրությանը:

3. «Ուրբան Յունիթ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

Բողոքներ քննող անձը 02.12.2019թ. գրությամբ դիմել է «Ուրբան Յունիթ» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 21.11.2019թ.-ի թիվ 26/26-1/19209-2019գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել Մասնակցի գրավոր կարծիքը:

Մասնակիցը ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, չի ներկայացրել գրավոր դիրքորոշում, առարկություններ կամ կարծիք, սակայն ներկայանալով նիստին «Ուրբան Յունիթ» ՍՊԸ-ի լիազորված անձը հայտնեց, որ առաջին անգամ էր ընկերությունը մասնակցում գնման գործընթացին և սխալմամբ գնային առաջարկով ներկայացրել են ապրանքի համար նախատեսված մեկ միավորի գին: Վերջինս հավաստեց նաև, որ դիմում են ներկայացրել Պատվիրատուին և հրաժարվել են պայմանագրի կնքումից:

4. <u>ՍՑ-LO-2019/229 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը,</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

ՀՀ ազգային անվտանգության ծառայության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից մարզական գույքի ձեռքբերում (N 2) նպատակով հայտարարվել է «ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԳՀԱՇՁԲ-20/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Ուրբան Յունիթ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 16.10.2019թ.-ին կայացած նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը որոշել է 10-րդ և 11-րդ չափաբաժինների մասով ընտրված/հաղթող/ մասնակից ճանաչել «Ուրբան Յունիթ» ՍՊԸ-ին:

05.11.2019թ.-ին պայմանագիր կնքելու նպատակով գնումների պաշտոնական տեղեկագրում Հանձնաժողովի կողմից հրապարակվել է պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարություն և սահմանվել է անգործության ժամկետ՝ հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 5-րդ օրացուցային օրը ներառյալ:

«Ուրբան Յունիթ» ՍՊԸ-ն 15.11.2019թ.-ին դիմել է «ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԳՀԱՇՁԲ-20/2» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին և հայտնել է, որ Ընթացակարգի հրավերով սահմանված ժամկետում ստացել է պայմանագիր կնքելու առաջարկի վերաբերյալ ծանուցումը և կնքվելիք պայմանագրի նախագիծը, սակայն հրաժարվում է պայմանագիրը կնքելուց:

Հանձնաժողովի 18.11.2019թ.-ին կայացած նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ «ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԳՀԱՇՁԲ-20/2» ծածկագրով ընթացակարգի 10-րդ և 11-րդ չափաբաժիններով ընտրված մասնակից ճանչված «Ուրբան Յունիթ» ՍՊԸ-ն հրաժարվել է սահմանված ժամկետում պայմանագիր կնքելուց:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցությանը, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 21.11.2019թ.-ի թիվ 26/26-1/19209-2019գրությամբ «Ուրբան Յունիթ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է բավարարման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ … մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պայմանագրի ապահովում ներկայացնելու պահանջի հիման վրա այն ստանալու օրվանից 10 աշխատանքային օրվա

ընթացքում ընտրված մասնակիցը պարտավոր է ներկայացնել պայմանագրի ապահովում: Ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքվում է, եթե վերջինս ներկայացնում է պայմանագրի ապահովում:

Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրն ստորագրելու իրավունքից:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 13-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկը և կնքվելիք պայմանագրի նախագիծը հանձնաժողովի քարտուղարը տրամադրում է էլեկտրոնային եղանակով: Ապրանքների գնման դեպքում պայմանագրի նախագծում ներառվում է ընտրված մասնակցի կողմից հայտով ներկայացված ապրանքի ամբողջական նկարագիրը:

Նույն կետի 14-րդ ենթակետի համաձայն՝ ընտրված մասնակցի կողմից հաստատված պայմանագրի նախագիծը պատվիրատուին ներկայացվում է գրավոր, և դա ներկայացնելու գրությունը հաշվառվում է պատվիրատուի փաստաթղթաշրջանառության համակարգում: Պատվիրատուի ղեկավարի կողմից պայմանագրի նախագիծը հաստատվում է այդ իրավասության առաջացմանը հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում:

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Վերոնշյալ իրավակարգավորումների համադրված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը եզրահանգում է, որ ընտրված մասնակիցը, հանձնաժողովի քարտուղարի կողմից էլեկտրոնային եղանակով ստանալով պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծը, պարտավոր է 10 աշխատանքային օրվա

ընթացքում պատվիրատուին ներկայացնել իր կողմից հաստատված պայմանագրի նախագիծն ու պայմանագրի կատարման ապահովումը:

Ընդ որում, եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին չի ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից:

Նման դեպքում առաջանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետի դրույթների կիրառման անխուսափելիությունը, քանի որ վերջինիս գործողությունները (անգործությունը) գնահատվում են, որպես պայմանագիր կնքելուց ընտրված մասնակցի կողմից հրաժարում:

Վերը շարադրվածից ելնելով՝ մասնակիցը պետք է ընդգրկվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ երկու տարի ժամկետով, քանի որ իր գործողություններով (անգործությամբ) պատվիրատուին չներկայացնելով պայմանագրի օրինակը և/կամ ապահովումը զրկվում է պայմանագիր կնքելու իրավունքից:

Սույն գործի փաստերի հիման վրա Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ ՀՀ ազգային անվտանգության ծառայության կողմից մարզական գույքի ձեռքբերման (N 2) նպատակով հայտարարված «ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԳՀԱՇՁԲ-20/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 16.10.2019թ.-ին կայացած նիստի թիվ 2 արձանագրության հիման վրա 10-րդ և 11-րդ չափաբաժինների մասով ընտրված/հաղթող/ մասնակից է ճանաչվել «Ուրբան Յունիթ» ՍՊԸ-ն:

05.11.2019թ.-ին պայմանագիր կնքելու նպատակով գնումների պաշտոնական տեղեկագրում Հանձնաժողովի կողմից հրապարակվել է պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարություն և սահմանվել է անգործության ժամկետ՝ հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 5-րդ օրացուցային օրը ներառյալ:

«Ուրբան Յունիթ» ՍՊԸ-ն 15.11.2019թ.-ին դիմել է «ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԳՀԱՇՁԲ-20/2» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին և հայտնել է, որ Ընթացակարգի հրավերով սահմանված ժամկետում ստացել է պայմանագիր կնքելու առաջարկի վերաբերյալ ծանուցումը և կնքվելիք պայմանագրի նախագիծը, սակայն հրաժարվում է պայմանագիրը կնքելուց:

Հանձնաժողովի 18.11.2019թ.-ին կայացած նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ «ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԳՀԱՇՁԲ-20/2» ծածկագրով ընթացակարգի 10-րդ և 11-րդ

չափաբաժիններով ընտրված մասնակից ճանչված «Ուրբան Յունիթ» ՍՊԸ-ն հրաժարվել է սահմանված ժամկետամ պայմանագիր կնքելուց:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Ուրբան Յունիթ» ՍՊԸ-ն, որպես ընտրված/հաղթող/ մասնակից, հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չներկայացնելով պայմանագիրը և պայմանագրի ապահովումը, հրաժարվել է պայմանագիր կնքելուց, այդ մասին 15.11.2019թ.-ին գրավոր հայտնելով Պավիրատուին:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 21.11.2019թ.-ի թիվ 26/26-1/19209-2019գրությամբ «Ուրբան Յունիթ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել:

2. «Ուրբան Յունիթ» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**